ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ո՞ՀՀՈՒ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ - 05/15

ՀՀ, քաղաք Երևան 26 մայիսի 2015թ.

«Արաքս» ԲԲԸ-ն (ք. Երևան, Եղվարդի խճուղի 111, գրանցման համար՝ 271.130.02205, վկայականի համար՝ 03Ա051447, ՀՎՀՀ՝ 01203692, Հ/Հ՝ 247121300450/1000) ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Հարությունյանի (անձնագիր՝ AM 0387958, տրված 22.07.2011թ. 012-ի կողմից), ով գործում է կանոնադրության համապատասխան (այսուհետ **«Վարձատու»**), մի կողմից և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը (հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. Ա. Միկոյան փող. 109/8, գրանցման համար՝ 286.180.05740, վկայականի համար՝ 01Բ001703, ՀՎՀՀ 02578338, Հ/Հ 9000114001352), ի դեմս աշխատակազմի ղեկավար Համլետ Հակոբյանի (անձնագիր՝ AM 0221595, տրված 01.03.2011թ. 008-ի կողմից), ով գործում է կանոնադրության համապատասխան (այսուհետ **«Վարձակալ»**), մյուս կողմից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, **կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.**

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն համապատասխան վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում 1.2. կետում նշված գույքը, որը օգտագործվելու է նպատակային նշանակությանը համապատասխան:

1.2. Վարձատուն Վարձակալին է հանձնում քաղաք Երևան, Դավիթաշեն համայնք, Դավիթաշեն 4-րդ թաղամաս գործարանի տարածք հասցեում գտնվող ոչ բնակելի տարածք, որը բաղկացած է 0,98 /զրո ամբողջ իննսունութ հարյուրերորդական/ հա ընդհանուր մակերեսով հողամասից և 621,2/վեց հարյուր քսանմեկ ամբողջ երկու տասնորդական/ քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունից, այսուհետև՝ «Գույք»:

1.3. «Գույքը» սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեի «Դավթաշեն» տարածքային ստորաբաժանման կողմից 26.01.2006թ. տրված հ.2068632 սեփականության իրավունքի վկայականի:

1.4. «Գույքը» վարձակալին պետք է հանձնվի սույն պայմանագիրը ստորագրելու պահից 1 (մեկ) օրվա ընթացքում:

1.5. Մինչ սույն պայմանագրի կնքումը նշված գույքը ոչ ոքի չի վաճառվել, արգելանքի (կալանքի) տակ չի գտնվում,համաձայն՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևան տարածքային ստորաբաժանման կողմից 21.05.2015թ. տրված N ՄՏ-21052015-01-0169 միասնական տեղեկանքի:

Ծածկագրերը համապատասխանեցված են ներկայումս գործող կարգին: Գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի անշարժ գույքի հասցեն ՀՀ Կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշման կարգին համապատասխանեցնելու վերաբերյալ իրավասու մարմնի (Երևանի քաղաքապետի) որոշում ներկայացնելու դեպքում:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1.Վարձակալից պահանջել «Գույքն» օգտագործել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

2.1.2.Վարձակալի կողմից վարձավճարը վճարելու ժամկետների խախտման դեպքում պահանջել լուծելու պայմանագիրը:

2.1.3.Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե վարձակալը գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ գույքի նշանակությանը անհամապատասխան:

2.2.Վարձատուն պարտավոր է՝

2.2.1.«Գույքը» վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխան վիճակում:

2.2.2.Վարձակալին նախազգուշացնել գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:

2.3.Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1.Պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 1.4. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել «Գույքը».:

2.3.2.Կատարել իր գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և հարդարման փոփոխություններ գույքի նկատմամբ՝ ստանալով վարձատուների գրավոր համաձայնությունը:

2.4.Վարձակալը պարտավոր է՝

2.4.1.Ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար նախատեսված վարձավճարը:

2.4.2.Պահպանել վարձակալության տրվող տարածքը, գույքը և այլ իրեր ՝ սահմանված սանիտարական, բնապահպանական, հակահրդեհային և օրենսդրությամբ սահմանված այլ նորմերը, ապահովելով դրանց համապատասխան ձևակերպումները:

2.4.3. Վճարել իր կողմից օգտագործված կոմունալ ծառայությունները՝ էլեկտրաէներգիայի, ջրի , հեռախոսի և գազամատակարարման կոմունալ ծառայությունները և վարձավճարի մեջ չմտնող դրա հետ առնչվող այլ վարձեր և հարկեր:

2.4.4. Կատարել ընթացիկ վերանորոգում:

2.4.5. Պայմանագիրը դադարելու դեպքում վարձատուներին վերադարձնել գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

2.4.6. Վարձավճարը ուշացնելու դեպքում վարձատուներին վճարում է տույժ ՀՀ քաղ.օր 411 հոդվածի պահանջներով:

2.4.7. Քաղ. օր.1071 հոդվածի համաձայն Վարձակալը կրում է անշարժ գույքը տիրապետելու օգտագործելու հետևանքով այլ անձանց կամ նրանց գույքին վնասի հատուցման պատասխանատվությունը:

2.4.8.Իր մեղքով վարձակալած գույքին հասցված վնասը վերականգնել սեփական միջոցներով.

3.ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1.Վարձավճարի չափը կազմում է ամսական՝ 350.000 /երեք հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, ներառյալ ԱԱՀ:

3.2.Վարձակալը վարձավճարը վճարելու է յուրաքանչյուր ամիս ոչ ուշ քան ընթացիկ ամսվա 15-ը:

3.3 Բոլոր հարկերը և կոմունալ վարձավճարները վճարվելու են Վարձակալի կողմից:

3.4 Սույն պայմանագրից բխող ֆինանսական պարտավորությունները կատարվում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի18-ի թիվ N 1515-Ն որոշման:

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նրանք կարող են պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.2.Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար որոնք նրանք նշել են սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունը ստուգելիս:

5.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

6.ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

6.1.Վարձակալած գույքից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

7. ԱՆՀԱՂԹԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին :

8.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8.1. Կողմի կողմից պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել միակողմանի այդ մասին 3/երեք/ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին: Այդ մասին նոր Վարձատուն պարտավոր է Վարձակալին իրազեկել ոչ ուշ, քան 3 ամիս առաջ:

9.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1.Սույն պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել միայն «Գույքը» օտարելու դեպքում, եթե նոր Վարձատուն չի կամենում շարունակել պայմանագիրը: Այդ մասին նոր Վարձատուն պարտավոր է Վարձակալին իրազեկել ոչ ուշ, քան 3 ամիս առաջ:

10.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1.Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից և վավերացված են նոտարական կարգով:

10.2.Սույն պայմանագրի նոտարական վավերացման պետական տուրքի վճարումը կատարվում է Վարձակալի կողմից:

10.3.Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10.4.Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում՝ 30 (երեսուն) օրյա ժամկետում:

10.5.Կողմերը հավաստիացնում են, որ պայմանագիրը մոլորության, խաբեության կամ սպառնալիքի ազդեցության տակ չեն կնքում, և այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին:

Վարձատու	Վարձակալ
«Արաքս» ԲԲԸ **Հասցե՝ ք. Երևան, Եղվարդի խճուղի 111, գրանցման համար՝ 271.130.02205, վկայականի համար՝ 03Ա051447, ՀՎՀՀ՝ 01203692, Հ/Հ՝ 247121300450/1000**	**ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարության աշխատակազմ** **Հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. Ա. Միկոյան փող. 109/8, գրանցման համար՝ 286.180.05740, վկայականի համար՝ 01Բ001703, ՀՎՀՀ 02578338, Հ/Հ 9000114001352**
Գործադիր տնօրեն՝ **Հ.Հարությունյան**	**Աշխատակազմի ղեկավար՝** **Հ. Հակոբյան**
ստորագրություն	**Ստորագրություն**
	Լիազորված անձ՝ Լիդա Աբրահամյան (անձնագիր՝ AG 0400383, տր.՝ 27.01. 2005թ. 005-ի կողմից, հասցե՝ ք. Երևան, Ն. Ստեփանյան 10շ. 15բն.)

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:2000
(մասշտաբը)



Հատվածը	երկարությունը չափը (մ)	Սահմանափակող հարևանները
1 - 2	28.0	Հրշեջ ջայլաշ
2 - 3	24.9	—— " ——
3 - 4	64.0	—— " ——
4 - 5	86.6	ապատ հարթակ
5 - 6	16.5	—— " ——
6 - 7	5.9	—— " ——
7 - 8	75.0	Մեյսմիկ ճայլաշ
8 - 1	124.5	Ճանապարհ

Շինության համարը	Շինության անվանումը
1	Ջեռուց. Ջերմոցային
2	Ջրի Պոմպակայան
3	խաղող ջրի ծավալ
4	խաղող ջրի ծավալ
5	խաղող ջրի ծավալ

Կատարող _____
(ստորագրություն)

Երկու հազար տասնհինգ թվականի մայիսի քառասներեքին, սույն պայմանագիրը վավերացված է իմ ԱՐԱՔԿԻՐ նոտարական տարածքի նոտար ԴԻԱՆՆԱ ՅՈՒՐԻԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՍ կողմից:

Կողմերը վարձակալության պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը ստուգված է, նրանց գործունակությունը պարզված, ինչպես նաև լիազորված անձի իրավունքներըանշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում 899 ով
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն Հայաստանի Հանրապետություն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների
ՆՈՏԱՐ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՔԻՐ ՄԱՐԶԻ ՆՈՏԱՐ ԴԻԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ REPUBLIC OF ARMENIA ARAGHIR REGION NOTARY DIANNA BEGLARYAN

Ընդորինակը կատարված է
ԵՎ ԿԻՍՄԱ
Նոտար Դ. Բեգլարյան

ՀՀ ք. Երևան, Կիևյան 11-83, հեռ. 32.30.02.
notarbeglaryan@gmail.com



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «2» Հունիսի 2015 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Դավթաշեն 4 թաղամաս գործարանի տարածք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 26.05.2015թ թիվ 899

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-004-0102-0025

Մակերեսի չափը (հա)՝ 0.98

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության.

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը .	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-004-0102-0025-001	կենտրոնական ջերմակայան	388.48 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
2	01-004-0102-0025-002	ջրի պոմպակայան	232.7 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության իրավունքի ժամկետը մինչև անորոշ ժամկետով

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արթուր Սարգսյան

գբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ՀՈՒԼԻՍԻ ՔՍԱՆԻՆ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆԻ

Ն ՀՀ-ՈՎՀԱԲԱԾ-05/15-1

20.07.2015թ.

ԿՈՂՄ-1 «Արաքս »ԲԲԸ

Հասցե՝ քաղաք Երևան, Եղվարդի խճուղի 111, Գրանցման համար՝ 271.130.02205, Վկայականի համար՝ 03Ա051447, ՀՎՀՀ՝ 01203692,
Հ/Հ՝ 247121300450/1000

Ի դեմս Լիազորված անձ՝ Գայանե Դաշտոյանի

Նույնականացման քարտ՝ 002358844, տր.՝ 06.03.2014թ. 012 կողմից Փաստաթղթի հասցե՝ Դավթաշեն 4-րդ թաղամաս, 43շ., բն. 11

ԿՈՂՄ-2 Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ

Հասցե՝ քաղաք Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան փողոց, 109/8, Գրանցման համար՝ 286.180.05740,Վկայականի համար՝ 01Բ001703,
ՀՎՀՀ 02578338, Հ/Հ՝ 9000114001352/

Ի դեմս Լիազորված անձ՝ *Լիդա Աբրահամյանի*

Անձնագիր՝ AG 0400383, տր.՝27.01.2005թ. 005-ի կողմից,Հասցե՝ քաղաք Երևան, Ն.Ստեփանյան 10շենք, 15 բնակարան

ԿՆՔԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ՝

1. «Արաքս» ԲԲԸ-ն՝ ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Հարությունյանի (անձնագիր՝ AM 0387958, տրված 22.07.2011թ. 012-ի կողմից), և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Համլետ Հակոբյանի (անձնագիր՝ AM 0221595, տրված 01.03.2011թ. 008-ի կողմից), այսուհետ՝ «ԿՈՂՄԵՐ», որոշեցին փոփոխել «ԱՐԱԲԿԻՐ» նոտարական տարածքի նոտար՝ ԴԻԱՆՆԱ ՅՈՒՐԻԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ կողմից 26.06.2015 թ. վավերացված հ. 899 անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը՝ կատարելով հետևյալ փոփոխությունները.

1.1. Պայմանագրի 2.4.6. կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Վարձակալի կողմից վարձավճարի վճարման սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ ոչ պատշաճ կատարման համար սահմանվում տուգանք պայմանագրի գումարի 0,5

տոկոսի չափով և տույժ 0,05 տոկոսի չափով յուրաքանչյուր օրվա համար՝ պայմանագրի չկատարված գնի նկատմամբ»,

1.2. Պայմանագրի 3-րդ գլուխը լրացնել 3.5. կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «Վարձակալը վարձավճարը վճարելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պարտավոր է հաշվարկված տուգանքի և տույժի գումարի փոխանցումն իրականացնել վճարվելիքվարձավճարի գումարների հետ»:

1.3. Պայմանագրի 4-րդ գլուխը լրացնել 4.3. կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «Օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում եթե պարզվում է, որ մինչև պայմանագրի կնքելը վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, տեղեկություններ և տվյալներ, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Այս դեպքում վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վարձատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասները՝ պայմանագրով վարձավճարի ամբողջ գումարի չափով»,

1.4. Պայմանագրի 10-րդ գլուխը լրացնել 10.6. կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պայմանագիրը կնքված է երկկողմ և չի նախատեսում երրորդ անձ գործակալ կամ ենթակապալառու»:

2.Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից,

3.Համաձայնագրի հետ կապված ծախսերը կատարվում են «ԿՈՂՄ-2»-ի կողմից,

4. Սույն համաձայնագիրը կողմերի ցանկությամբ կնքված է հայերեն լեզվով, 3 (երեք) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Համաձայնագրի բովանդակությունը կողմերի կողմից ընթերցվեց:

6. Բովանդակությունը բավարարում է կողմերի պահանջներին:

ԿՈՂՄ-1	ԿՈՂՄ-2
«Արաքս» ԲԲԸ *Լիազորված անձ՝* Գայանե Դաշտոյան	ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարության աշխատակազմ *Լիազորված անձ՝ Լիդա Աբրահամյան*

Գործարքի կոդ: 507-20150720-88-402641
Գործարքի ծածկագիր: GGBEUQ

երկու հազար տասնհինգ թվականի հուլիսի քսանին, սույն համաձայնագիրը պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին վավերացվել է «ԱՐԱԲԿԻՐ» նոտարական տարածքի նոտար՝ Դիաննա Յուրիի Բեգլարյանիս կողմից:
Համաձայնագիրը պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը ստուգված է, նրանց գործունակությունը՝ պարզված, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:
Սույն համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում

Գրանցված է սեղանամատյանում 1438 ով

Գանձված է պետական տուրք 2000 դրամ և ծառայության վճար 6000 դրամ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝ Դիաննա Յուրիի Բեգլարյան